

թագաւորը քո մանուկ է. և իշխանը քո ընդ առաւօտա ուտին և զհետ լինին ցեղին» (էջ 227): Վերի հատուածին նովաւ աւելորդով կալ բառերը կը ցուցնեն թէ այս մանուկ հայրապետացուն Հաղբատեցոց զեղիութեանը աչք կը գոցէր, ինչ որ չպիտի ընէր Լամբրոնացոյն ընտրելին:

Այսպէս ըմբռնելով խնդիրը՝ կրնանք մեկնել կարծուել «կարճել, դադրեցնել», մոզկատի «զայրանալ, վշտանալ, սիրտը ցաւիլ»: Այն ժամանակ հատուածը կը թարգմանուի. «Այսպէս մտածեցին, անոր միջոցով անվրդով մնալ արեքցութեան, կերուխումի և թւրիշ չարիքներու մէջ՝ որոնց մէջ կը թովաւ, և զայրանալով այն բանէն՝ որ (նորընտիր հայրապետը) պիտի դադրեցնէր զանոնք, անտես ըրին են.»:

Այս վերջին մեկնութեան կողմն է բառերուն կազմութիւնը:

Հիշուողներուն կը թողում լուծել խընդիրը:

Հ. ԱՃԱՌԻԱՆ

Շարունակելի

Գ Ր Ա Խ Օ Ս Ա Կ Ա Ն Ք

Հայկական մատենագրութիւնը բով մ'է թանկագին հաբատութեանց որոնք դեռ դժբաղդաբար ծածկուած կը մնան գրադարաններու խորշերը. և յիշաւի մեծապէս արդիւնատուր են ազգային գիտութեանց ծաւալման համար անոնք որ անձնուիրաբար զոհնելով իրենց յարգի ժամանակը համբերատար և անխոնջ աշխատութեամբ կը բնտոեն այդ գանձերը և զանոնք աննախանձ բարեսիրութեամբ կը պարզեն բանասիրաց առջև: Ուրախ ենք որ այսօր կրնանք ներկայացնել ի յարգանս ամէն բարեսիրաց երկու անուններ որոնք արդէն բանասիրական ասպարիզի մէջ ամէնաթա-

նօթ են, Հ. ԲԱՐՍԵՂ Վ. ՍԱՐԳԻՍԻԱՆ, և ԲՐՈՑ. ՖՐԵԴԵՐԻԿ ԿՈՆՏԵՆ, որոնք երկու հակայ երկասիրութեամբ հայկական ձեռագիրներու ճոխութիւնը մեզի կը ներկայացնեն: Երկու Յուցականք են հայ ձեռագրաց, մին անգղիական մեծագոյն Մատենադարանի (British Museum) և միւսը Մխիթարեան մայրավանացա Ս. Ղազարու: Երկու՝ զոյգ աշխատութիւններ յօրինուած մի և նոյն անձնուէր քրտնաջան վաստակով, մի և նոյն եռանդեամբ օգտակար հանդիսանալու, մի և նոյն հրմտութեամբ և բանասիրական զննութեամբ. որոնք սակայն իրարմէ մեծապէս կը տարբերին ընտրուած նպատակին և հետեւաբար նաև գործադրուած կերպին մէջ: Եւ մինչդեռ անձանուն Քրոֆ. Կոնիքեր կը զոհանայ պարզապէս ցուցակազրելով անգղիական մատենադարանի հայկական ձեռագիրներն՝ իրենց պարունակութեամբ, գեր. Հ. Բարսեղ Վ. Սարգիսեան ազգասիրական աւելումով կը սուզուի ձեռագրական ճոխութեանց բովին մէջ և հոն կը պարզէ մի առ մի ինչ որ կրնայ գտնել բանասիրական հմտութեամբ՝ քննելիք և դիտելիք պարագաներ, պատմական, լեզուագիտական, մատենագրական, գեղարուեստական կայլն լուսաբանութեամբ:

Մեծ Քրոֆ. Կոնիքերի հրատարակուած թիւնը կը կայանայ երկու անշատ մասերէ, մին՝ (իւր իսկ երկասիրութիւնը) կը բովանդակէ (էջ 1 մինչև 349) հարիւր քառասուներկու հայ ձեռագրաց պարունակութեան ցուցակը հետեւալ դասաւորութեամբ.

Ս. Գիրք

Պաշտամանց գիրք

Սաղմոսք

Ճաշոցք

Պատարագամատոյցք, Մաշտոցք կայլն

Մանրուսմունք

Գիրք ձեռնագրութեանց

Շարականք

Գանձարան

Կանոնք

ժամագիրք—տոմարք ևայլն
 Յայտմաւուրք—Վկայարանութիւնք
 Տօնապատճառք, Տօնացոյցք
 Մեկնութիւն Ս. Գրոց, Ճառք և Հայրա-
 ցիտական աստուածաբանութիւն

Սրբախօսութիւն և անվաւերք
 Տրամաբանութիւն
 Կրօնական, իմաստասիրական և բարոյա-
 կան գործք խառն բովանդակութեամբ,

Կոնդակք
 Քերթուածք, Պատմութիւնք
 Պատմական և աշխարհագրական գործք
 Քերականական և Բառագիրք

Աստղաբաշխական — Աստղագիտական
 — բժշկական և մոզականք. որոնց կը յա-
 ջորդեն (յէջ 350-354) եօթը կտոր զա-
 նազան գործեր և թուղթեր. (էջ 355-
 395) ցուցակներ՝ յատուկ անուանց և թուա-
 կան դասաւորութիւն ձեռագրաց, Վրական
 ձեռագրաց բաժինը ամփոփուած է 397-
 410 էջերու մէջ, ցուցակաւ հանդերձ:
 Գեր. Հ. Բարսեղ Վ. Սարգիսեանին Մայր
 ցոյցակը, որ դեռ միայն իբրեւ առաջին
 հատոր կը ներկայանայ՝ մեր մատենադա-
 րանի ձեռագրաց, կը պարունակէ մանրա-
 զնին հմուտ ուսումնասիրութիւն և նկարա-
 գրութիւն թիւ 24 Աստուածաշունչներու
 (էջ 1-176) թիւ 61

Սաղմասարաններու (էջ 177 - 370)
 թիւ 106

Աւետարաններու (էջ 373 - 794) և
 թիւ 8

Նոր կտակարաններու (Թղթոց—Գործք
 Առաքելոց) (էջ 794-838):


Այս թիւ 199 ձեռագրաց մէջ կը պա-
 րունակուին յունարէն աւետարան մը, ինչ-
 պէս ուրիշ մը՝ տանկերէն և նոր կտա-
 կարան մը՝ թաթարերէն լեզուով: Չենք
 ուզեր այս համբերատար և հսկայածե
 աշխատութեան մասին երկար նկարագրու-
 թիւն ընել, քանի որ կը յուսանք թէ
 մեր ազգային բանասէրք պիտի փափաքին
 զայն անձամբ տեսնել և իրենց ուսումնա-
 սիրութեան համար գործածել ու վայելել:
 Հրատարակութեան պարագաներն արդէն
 համառօտ կերպով պարզած է նոյն ինքն


մեծարգոյ հեղինակը (էջ Թ-ԺԹ) Ներա-
 ծոքեալը մէջ: Հոս մեր ընթերցողաց հա-
 ճոյք մը պատճառելու համար դնենք միայն
 այս Մայր ցուցակին պարունակած մի-
 քանի մանրանկար պատկերներէ այս հե-
 տեակները, որոնք ցոյց տալով Հ. Բ. Վ.
 Սարգիսեանի գործին յարգը՝ կը ցուցնեն
 միանգամայն մեր նախնեաց գեղարուես-
 տական ճաշակի ծայրագոյն նրբութիւնն
 և գծագրութեան արուեստի զարգացած
 կատարելութիւնն, որով արժանաւոր մըր-
 ցակից կը հանդիսանան եւրոպական ա-
 րուեստագիտաց այդ դարերու զլուծ գոր-
 ծոցներու:

— Մեր նախնեաց գեղարուեստին զար-
 ցացման գաղափար կու տայ մեզ նաեւ
 Գեր. Սահակ Իր. Վ. Աստուածատուրեանի
 Պատկերացոյց հասարածոյն Էջմիածնի և
 շրջակայից մասնաւոր հնութեանց: Գեր.
 Հեղինակին հրատարակութիւնը ծանօթ է
 արդէն մեր ընթերցող հասարակութեան
 1911էն ի վեր երբ առաջին պրակն հրա-
 տարակուեցաւ ամենուն զովութեան և քա-
 ջաւերական շնորհաւորութեանց արժանա-
 նալով: Նոյն զովութիւններն ու շնորհա-
 ւորութիւնները կրկնել աւելորդ կը հա-
 մարինք նորէն: Գեր. Հեղինակն արդիւ-
 նաւոր է յիշատի նաեւ այս երկրորդ Պրա-
 կով, ուր գետեղուած կը տեսնենք հա-
 մառօտ նկարագրութեամբ և պատկերնե-
 րով՝ բեկռագիր արձանագրութիւններ, զա-
 նազան անօթներ, զարդեր, դրամներ,
 դրօշակներ, աթոռներ, նշանաւոր վանքեր
 և հաստատութիւններ և մի քանի երեւելի
 անձնաւորութիւններ, որոնք ընդամենը
 վաթսուների շափ են: Մեծապէս ուրախա-
 ոթիթ է հեղինակին աւետելն որ Տարօնոյ
 Ս. Կարապետ հոգակաւոր վանուց մէջ
 հաստատուած է արդէն ազգային հնու-
 թեանց Մատենադարան—թանգարան մը,
 իցիւ թէ ամէն գաւառներու մէջ հետզհետէ
 այսպիսի հաստատութիւններ հիմնուէին և
 մեր նախնեաց նուիրական նշխարները
 կորստենէ և կամ եւրոպական թանգա-
 րաններու մէջ գաղթելէ ազատէին:

Կը մաղթենք որ Գեր. Հեղինակն


111094409455 — 7113P 8013044






N^o. 1. — Հմմտ. Թ. Յ. Աստուածաշունչի գ. (1648)

Նկարագր. ձևազրկն էջ 25-48
Արտատպ. պատկերին էջ Թ. - Ժ.



ԱՐԳԻՄԵՆ — ՄԱՅՐ ՅՈՒՅՆԿ



№ 2. — Հմեռ. Թ. 125 Աւետարան Խ. (1193) Լաբրանցայ

Նկարագր. ձևազրկ՝ էջ 549-569


Արտադր. պատկերներ՝ էջ 373-374



№ 3. — Հմեռ. Թ. 86 Աւետարան Ա. (821-922) Միգէի

Նկարագր. ձևազրկ՝ էջ 373-392

Արտադր. պատկերներ՝ էջ 388



բազ արագ հրատարակէ սոյնպիսի պրակներ ազգային գիտութեանց, հնախօսութեան և գեղարուեստից պարագլոյններու ուրախութիւն պատնառելով:

— Սոյնպիսի յարգի աշխատութիւն է նաև Կ. Կոստանեանցի վիմախառն տարեգիրքը, որուն անունն արդէն կը ցուցնէ հայկական արձանագրութեանց հաւաքածոյ մ'ըլլալը: Հոն արձանագրութիւնը կը դասաւորուին ժամանակագրական կարգաւ սկսեալ վեցերորդ դարէն մինչև 1800 թ. քաղելով բոլոր մինչև ցարդ եղած հրատարակութիւններէ և կամ անձամբ՝ օրինակուած են իրենց գոյութեան տեղերէ: Ասոնց հետ կը գտնուին նաև բազմաթիւ արձանագրութիւնք որոնք տարեթիւ չունին և դասաւորուած են իրենց գտնուած վայրերու համեմատ:

— Կոլկասի Հայոց Հրատարակչական Ընկերութիւնը որ այնքան արդիւնաւոր է օգտակար հրատարակութեանց շարքեր հետզհետէ ծաւալելով, հիմայ նոր արգիւնք մ'ալ կը շահի Ստեփանոս Նազարեանցի երկերուն ամբողջական հաւաքածոյ մը կազմելով: Այս առաջին հատորը կը բովանդակէ ընտիր կենսագրութիւն մը Ստ. Նազարեանցի (էջ ԺԱ — ԽԱ) գրուած Հ. Աղբալեանէ: Նազարեանցի գործերէն կը գտնուին այս հատորին մէջ գլխաւորապէս Հիստորիայի մէջ հրատարակուած բազմաթիւ քննական, բանասիրական, կենսագրական և այլն յօդուածները, սկսեալ էջ 1-411: Թետոյ կայ ցուցակ մը Նազարեանցի բոլոր երկասիրութեանց թէ՛ ինքնագիրը ըլլան և թէ թարգմանածոյ, հրատարակուած՝ առանձին և կամ պարբերական թերթերու մէջ:

— Պ. Հ. Աճառեան կը կազմէ Լուսնեան Ազգայնական Ժողովածոյին իններորդ հատորը իւր գեղեցիկ Հայերէն գրաստական Բառարանով: Ընդարձակ ծաւալով և լեզուագիտական ճոխ գանձերով պատուական հրատարակութիւն: Թարգի է մասնաւորապէս Մեծ. Հեղինակին Յառաջաբանը, ուր պայծառ կերպով կը ներկայացնէ

1. — Հայերէնի 31 բարբառները և անոնց դասաւորութիւնը
2. — Ինչ տեսակ բառեր կը պարունակեն հայ բարբառները (քնիկ, օտար և գաւառական բառեր)
3. — Գաւառական բարբառներու պատմականը
4. — Գաւառական բառերու ուղղագրութիւնը
5. — Հայ բարբառներու ընդհանուր ձայնախօսութիւնն ու ձայնաբանութիւնը. — Էւ հուսկ իր միտքը այս
6. — Աշխատութեան կազմութեան մասին.

Բուն բարբառանի կազմութեան չանցած հեղինակը կու տայ նաև գեղեցիկ ուսումնասիրուած համառօտ

Ձայնակոն և քերականական ուրուսդիծ Հայ բարբառներու, բաժնեցով զանոնք և բերք ճիւղերու

Ա. — Ում-ի ճիւղ

Բ. — Կը-ի ճիւղ

Գ. — Ել-ի ճիւղ:

— Խորհեացի. հայ մատենագրութեան, պատմութեան, բանասիրութեան հիմնաքարը և նշանակէտը, դարձեալ նոր հրատարակութեամբ մը յերևան կ'ելլայ Մ. Արեղեանի և Ս. Յարութիւնեանի երկասիրութեամբ՝ իբրև առաջին գիրք երկրորդ հատորի Պատմագիրքը Հայոց հաւաքածոյին: Սոյն հրատարակութեան մէջ ալ նոյն ոճը բռնուած է, ինչ որ տեսանք նախորդ Ղազար Փարպեցիի, Աղաթանգեղոս հատորներուն մէջ:

Մի և նոյն խղճամիտ համեմատութիւն ձեռագրաց, որոնք դժբաղդարար դեռ վերջնական գտում մը չեն կրնար յանձնարարել, մեծաւ մասամբ իրարմէ օրինակուած ըլլալով և մեծաւ մասամբ արդէն իսկ իրենց, զբաղվելները, խանգարուած և դիւրաստանք գրութիւն մ'ըլլալով: Խորհեանցին որ դարերէ դար կը տարուր բերի խիթէ գնտակի մը նման ելլելով և իջնելով, խոնարհելով և բարձրանալով հմուտ և անհմուտ բանասէրներու գիտութեան կամ քմահաճոյից հարուածներու

տակ, դեռ իւր վերջնական գիտական հրա-
տարակութիւնը գտած չէ. դեռ պիտի սպա-
սէ, ո՛ր գիտէ քանի տասնեակ տարիներ՝
չըսելու համար դարեր, վերջնական կեր-
պով իբր արհամարհ անկիւն մը նետուե-
լու համար, և կամ իբր ստուգապատում
բազմահմուտ մատենագիր իր փառաց ա-
թորը գրաւելու համար անխախտ կեր-
պով:

Այս հրատարակութեան Յառաջալսմ
ներածութիւնը կը պարունակէ տեղեկու-
թիւններ հետեւել բաժանմամբ

I. Մովսէս Խորենացու Հայոց պատմու-
թեան տպագրութիւնն ու ձեռագիրնե-
րը:

II. Մատենագրութիւն. Ա. Տպագրութիւն-
ներ. Բ. Քննութիւններ և ուսումնա-
սիրութիւններ:

Իցիւ թէ զէ՛թ այսուհետեւ մեր բնա-
սէր քննադատը ուզէին յիշել ու բնա-
շմոռնալ Խորենացու այս անկեղծ բացա-
տրութիւնը և խոստովանութիւնը.

« Բայց առաւել յաճախագոյն հինքն-
Արամազենայց ի նուագս փանդոան և
յերգս ցցոց և պարուց զայսոսիկ ասեն
յիշատակաւ: Եւ այսոքիկ զրոյցք աւտ և
կամ թէ արդարեւ լեալ՝ մեզ չէ փոյթ:
Այլ վասն գիտելոյ քեզ զամենայն, որ
ինչ ի լրոյ և որ ինչ ի գրոց՝ անցանեմ
ընդ բնան ի գիրսս յայսոսիկ, զի իմաս-
ցիս զառ քեզ պարզմտութիւն իմոց խոր-
հրդոցս», և ըստ այնմ իրենց դատողու-
թիւնքը կազմէին:

— Եղիշէ Տ. Ք. Գեղամեանցի Պատ-
մական Քաղաքապետը մեծապէս օգտակար
են ժիւ-ժիթ դարերու ազգային պատմու-
թեան ուսումնասիրութեան համար: Այս
գեղեցիկ աշխատութեան ներկայ երեք
պրակները (Պրակ Ե. 2. Է.) կը պարու-
նակեն Յովհաննէս Ը. կաթողիկոսի (Պրակ
Ե. Մասն I Պրակ 2. Մասն II) և Ներ-
սէս Ե. կաթողիկոս Աշտարակեցու (Պրակ
Է. Մասն I) գործերը և ժամանակակից
պարագաները:

Որքան ալ արդէն ծանօթ ըլլան ասոնք
« Հո վ ի տ » շաբաթաթերթին մէջ հրա-

տարակուած ըլլալով, սակայն հիմալ այս-
պէս առանձին հատորով լոյս հանելը
օգտակար ծառայութիւն մ'է՛ ազգային բա-
նասիրութեան:

— Նոյնպէս «Կաթողիկէ Արձագանգ»
թերթին զանազան թիւերէն (թ. 96-104)
ունինք յաճորդարար հրատարակուած ու-
սումնասիրութիւն մը կոստանդիանոս կայ-
սեր և Հայոց մէջ եղած յարաբերութեանց.
և այդ ուսումնասիրութիւնն այժմ առան-
ձին հատորով մ'ալ լոյս կը տեսնէ: Հե-
ղինակն Գեոր. Գէորգ Ե. Վ. Թէրզիպա-
շեան գլխաւորապէս (ինչպէս բնական էր)
կը հետաքրքրուի Ս. Գրիգոր Լուսաւորչայ
ի Հոռով ուղևորութեան խնդրով. խնդի-
ր մը որ շատ թեր ու դէմ գրութեանց և
տեսութեանց առիթ տուած է արդէն ա-
ռանց վերջնական լուծման մը յանգելու:
Կրնանք ըսել որ այդպիսի լուծում մը ներկա-
յացնէ մեզ Գեոր. Թէրզիպաշեան, մինչդեռ
կը կրկնէ նախորդ պատճառարանութեանց
հիմնական կէտերը: Մեզի համար կը թուի
թէ խնդիրը կը մնայ դեռ նոյնպէս վիճա-
րանութեան ենթակայ որքան ալ Գեոր.
Հեղինակը ջերմ պաշտպան հանդիսանայ
Ս. Լուսաւորչի ուղևորութեան կատա-
րուած ըլլալուն ի Հոռով, հետեւելով երե-
ւելի Չամչեաններու, Ազգեհաններու, Յով-
նանեաններու՝ տեսութեանց: Որքան ալ
հաճոյցով և յօժարութեամբ ընդունինք
ազգային այս ամենամեծ պարծանքը, չենք
կրնար հաւատնել որ այս հրատարակու-
թեամբ հակառակորդաց բոլոր տարակոյս-
ներն ալ ջնջուած ու լուսաբանուած ըլ-
լան Որքան ալ սիրով — հակառակ արտա-
քին մատենագրաց մերժողական դրութեան
և հիմնուելով միայն ազգային մտանա-
գրաց հաստատուն ու միաձայն աւանդու-
թեան վրայ, — ընդունինք տեսակցութեան
և դաշնակցութեան մը գոյութիւնը երկու
հզօր և քրիստոնեայ վեհապետներու միջև,
և իբր հաւանական հետեանք ընդունինք
նաեւ երկու Սուրբ Հայրապետաց միջև
եղբայրական սիրոյ զօր տ հաղորդակցու-
թիւն մը — ինչ որ աւելի քան հաւա-
նական՝ սերտագոյն՝ եղած կը հաւատանք,

— կը մնան դեռ ստուգելի պարագայներ այս կրկնակ տեսութեանց ու հաղորդակցութեանց հանգամանքներու մասին, որոնց մէջ վերջինը չէ նաև տեղւոյ հանգամանքը: Եւ յիշատի մեր ձեռքն եղած այսօրուան առհասարակեանքով կարելի է պատմական ստուգութեամբ ճշդել թէ յիշատակուած Հոռով ճաղաքն՝ էր ստուգիւ Հոռով մայրն քաղաքացի, թէ՛ Կ. Պոլիս՝ նոր աթոռա նիստն կայսերական, թէ՛ Կեսարիա՝ հիմնովայրն հռովմէական կայսերական գաղթականութեան, թէ... Նոյն իսկ Երուսաղէմ՝ սրբազան քաղաքն Փրկչական տնօրէնութեանց՝ ուր ազգային միջնադարեան ականջութիւն մը ուխտի կը բերէ երկու քրիստոնէայ առաջին սուրբ վահագնները և հոն նոյն իսկ Յիսուսի Ս. պատարագի խորհրդով սրբագործուած սուրբ Արեամբ կնքել կու տայ եզրայրակցութեան դաշնադրութիւնը:

— Գարձեալ «կաթողիկէ Արձազանգ»էն ամփոփուած հատոր մ'է Գեր. Յակոբ Վ. Մաղարեանի Համատու կենսագրութիւնն էր. Տէր Կոմիտաս Նահատակին, որ ութևտաններով դարուն մեր ազգային ամենամեծ պարծանաց մին է իւր հաւատոց ախոյեան հանդիսանալով և Քրիստոսի սիրոյն համար մարտիրոսական արիւնն ուրախութեամբ հեղուլ: Եր. Տէր Կոմիտասայ անունն իւր գերեզմանին վրայ կատարուած սքանչելագործութեանց համբաւով տարածուած է արդէն ազգիս մէջ, սակայն խիստ քիչեր թերեւ տեղեկութիւն ունենան իր վարուց և նահատակութեան պարագաներուն, ուստի մեծապէս օգտակար գործ մ'է Գեր. Մաղարեան Վ.ի աշխատասիրութիւնը:

— Ժամանակակից և հոգեկից և նահատակակից էր. Տէր Կոմիտասայ էր նաև մեր լուսանորոգ Հիմնադիր Երանաշնորհ Մխիթար Արքահայրն, որ թէպէտ չունեցաւ առիթ արեամբ մարտիրոսանալու, այլ հանդիսացաւ յաճախ առիթներու մէջ ախոյեան անյաղթ և խոստովանող և քաղաք ճշմարիտ քրիստոնէական ուղղափառ կրօնից:

Հիմայ յուսալից ակնկալութեամբ որ այլևս հասած ըլլայ ժամանակն որ Ս. Եկեղեցին հաւատացելոց առջև ներկայացնէ զինքն երանութեան ու սրբութեան լուսասփիւտով զարդարուած, մինչդեռ ծխից Ս. Ժողովոյ առջև կը կատարուի իւր երանացուցման դատը, Գեր. Հ. Մինաս Վ. դատին ջատագովը, կը հրատարակէ ընդարձակ վարք մը իտալերէն լեզուով. և այսու դիւրութիւն կ'ընծայէ թէ՛ քննիչ դատաւորաց և թէ՛ հաւատացելոց բազմութեան աւելի սերտի ճանչնալու Մխիթարայ հոգւոյն վեհութիւնը և իւր զիւցաղնական առաքինութեանց բարձրութիւնը: Այս նպատակաւ համատու ժողովողական վարք մ'ալ հրատարակուեցաւ անցեալ տարի Ս. Ղազարու վանացս մասնովն:

— Ո՛րքան տխրադիմ է տեսնել որ այսպիսի նուիրական հատորներու զուգակից լոյս կը տեսնեն մեր ազգին մէջ տեսեալներ որոնց նպատակն է խաւարի և մոլութեան ստուերները դեռ աւելի թանձրացնել մեր զօթաղղ ազգին վերև և հակառակութեանց, ատելութեանց նորանոր զրգիւններ յարուցանել: Ասոց են Տօճ Քաշադր և Եղորշմայերի Պապ և Անտառաբեկ. որոնց մասին խօսելն անգամ աւելորդ է և որոնց առաջինը շատ լաւ կերպով արդէն որակուեցաւ «կաթ. Արձազանգ»ին մէջ:

— Այսպիսի հրատարակութեանց կարգը դասելու ստիպուած ենք զօթաղղաբար նաև Մաղ. Արք. Օրմանեան նախկին պատրիարքի Ազգայապատուը, որու մասին ուրիշ առիթն արդէն մեր տեսութիւնը պարզած ենք: Հիմայ ունինք առջևինս նաև իւր Հայկական Եկեղեցի — Eglise Arménienneի առևտրէն լեզուով թարգմանութիւնը զաղդիբերէնի վրայէն կատարուած:

— Ընդհակառակն գովելի աշխատութիւն մ'է Արշակ Կ. Թիւթիկեանի Պատմական Յիսուս Քրիստոս հատորիկը իր շարժառիթ գաղափարով և պարզ և լուսաւոր բովանդակութեամբը, որոնք երկու

հետեւեալ անյղղի ճշմարտութեանց մէջ
կը գտնեն իրենց վերջնական ամփոփումը,
հաստատելով Քրիստոսի պատմականութեան
մասին, որ

Ա. Ապացուցանելը ժըխտելէն աւելի
դիւրին է: Հաւատացողին դիրքը ապահով
է. միտքը և սիրտը հանգիստ ու խաղաղ.
իսկ սկիպտիկը հաստատ վիճակ չունենար,
մութի մէջ կը մուրրի:

Բ. Թիսուս մը հնարելու համար, Թի-
սուսի կեանքն ու գործը նկարագրելու
համար, Թիսուսի մը Գոյութիւնը անհրա-
ժեշտ էր: Առանց Քրիստոսի ո՛չ Աւետա-
րանները կը գրուէին, ո՛չ Քրիստոնէու-
թիւնը աշխարհի տիեզերական կրօնքը
կրնար ըլլալ և ո՛չ ալ այսչափ մեծ օրհ-
նութիւններ ծնունդ կ'առնէին:

— Յարգելի է իւր գաղափարին մէջ
նաև Թակոր քհ. Բարեջանեանի աշխա-
տութիւնը Կիսր գիտութեան ու կրօնքի մէ-
ջուցնելու համար որ ճշմարիտ գիտութիւնը
և ուղիղ ըմբռնուած հաւատքը երբէք ի-
րարու թշնամի չեն, այլ մանաւանդ հա-
ւատքը գիտութեամբ՝ կը լուսաւորուի և
գիտութիւնը կրօնքով կը զարգանայ և կը
բարգաւաճի: Այս ճշմարտութիւնը դեռ
ըմբռնած ըլլալ չթուիք վ. Զէյթունցեան
երբ թարգմանելով կը հրատարակէ իւն-
թերմանի Կիսրքիւնը և Յեղիոփոփիւնը,
ուր ժողովրդեան (Պրոլետարիան) գաղա-
փարները կը ներկայացուին իբրև գիտու-
թեան զարգացուցիչ, մինչ անոնք են որ
սուտ գիտութեան և յառաջադիմութեան
շողիւնով շլացուցած աչքերը, չեն թողուր
որ սևեռին ճշմարիտ գիտութեան լուսա-
տու գաղափարաց և ճանաչանքի ուրոն
երջանութեան կ'առաջնորդեն մարդկային
ցեղը:

— Ժողովրդեան ուղիղ առաջնորդու-
թեան ձայներ են երկու համառօտ կոչերը
զոր կ'ուղղեն մեր գաղթասէր պանդուխտ-
ներուն Գէորգ ԻՄ. Վ. Արալեան և
Մկրտիչ Փորթուգալեան (Հայ Պանդուխ-
տի և Մի' գաղթի) յորդորելով մեր թը-
շուառ ժողովուրդը կասեցնել իր գաղթա-
կան քայլերը և տոկուն աշխատասիրու-

թեամբ մ'աշխատիլ հայրենեաց մէջի թը-
շուառութիւնները բառնալու, քան թէ իա-
բէական յուսով ովկիաններ կտրելէ վերջ
յուսախար հիասթափիլ անտանելի թշուա-
ռութեանց մէջ, որոնց կը մատնուին ան-
խորհուրդ գաղթականութեամբ:

— Ասոնց կարգին դասինք նաև Հօլի,
Տ. Նազ. ի և Ռ. Թորոսեանի հրատարակու-
թիւնները, որոնց միջինը անկեղծ հայելի
մը կը ներկայացնէ Աղբիւր-Տարաղի ան-
նախանձելի տնտեսական դրութեան՝ այն
հասարակութեան առջև, որ գովեստներ
շոյալելով հանդերձ՝ իր քաջալերիչ լուսան
կը զլանայ ազգային անձնուէր գործիչի
մը և իւր օգտակար պատուաբեր գործին:

— Գովելի գործ մ'է Լևոն Լարենցի
ձեռնարկը՝ հայերէն թարգմանելով Հ. Յ.
Պ. Լինչի Հայաստան-Ուղեորութիւնը և
Ուսումնասիրութիւններ մանազեղեցիկ գոր-
ծը. որուն հայերէն թարգմանութիւնը
պարտք մ'էր որ ամբողջ ազգին վրայ կը
ծանրանար: Հայաստանի հին և նոր պատ-
մութիւն, աշխարհագրական՝ քաղաքական
տեղագրութիւն, ազգային կեանքի պատ-
կեր ու նկարագիր, արուեստի և գեղա-
րուեստի յուշարձաններ և կոթողներ, կրօ-
նական և գիտական ու գրական հայելի
մը, ահա ինչ որ կը ներկայացնէ այս
գիրքը՝ յիշատի եզակի և սքանչելի իւր
էութեան մէջ: Պ. Լարենցի թարգմանու-
թիւնը յիշատի արժանի է Հեղինակին գոր-
ծին, և եթէ կայ ցաւալի կէտ մը նկար-
ներուն փորագրութեան ոչ այնքան կա-
տարեալ և նուրբ ըլլալն է. սակայն մեզ
հայոցս համար աննշմարելի պակաս մը
պիտի համարուի այս՝ եթէ իւրաքանչիւր
որ այս գեղեցիկ հրատարակութիւնն իր
ձեռքն առած անձամբ ճանապարհորդէ Հա-
յաստանի մէջ, տեսնելու համար իւր հայ-
րենի աւերակները, շնչելու համար հայ-
րենեաց քաղցր սիւզն և սառնահալ բիւ-
րեղեայ առուակներու ջուրով իւր պաս-
քած ու ցամաքած ոգին կազդուրելու:

Այժմ հրատարակուածն ողբացեալ հե-
ղինակին երկհատոր գործին միայն առա-
ջին հատորն է, որուն կը յուսանք շուտով

յաջորդէ նաև երկրորդը, թրքահայոց համար աւելի կարևոր և աւելի հետաքրքրական, եթէ հայրենեաց գաւառներու մէջ կարելի է զանազանութիւն մը դնել առաւել կամ նուազ հետաքրքրական անուանելով:

— Տեղագրական և պատմական գեղեցիկ երկասիրութիւն է Ֆարհատի (Մինաս Գ. Գասապեանի) Հայերը Նիկովիդիոյ զուտսիճ մէջ ուսումնասիրութիւնը՝ վիճակագրական ցուցակներով և քարտէսով: Խցիւթէ իւրաքանչիւր գաղթավայրի համար և մանաւանդ Փոքր Ասիոյ իւրաքանչիւր գաւառի համար գտնուէին Պ. Գ. Գասապեանի եռանդեամբ և ձեռնհասութեամբ օժտուած անձինք որ այսպիսի պատկերներով ամբողջ հայութեան կեանքն հատորներու մէջ ամփոփէին:

— Եթէ ոչ ազգասիրական տեսակէտով՝ այլ պատմական և տեղագրական տեսակէտով կարևոր պակաս մը լրացնել կուզայ Յ. Սուֆեանի Լիբանան և Լիբանանցիք համառոտ տեղեկութիւններու տետրակը. թեթև ակնարկի մը մէջ ամփոփելով հին դարերէ մինչև մեր օրերը Լիբանանու քաղաքական պարագայները:

— Քաղաքական և եկեղեցական պատմական անձանց զրական պատկերները կը գծագրէ վարժ ու սահուն զբոյժ (թէպէտ գերմաներէն լեզուով) Հայկ Յովհաննէսեան, քաղելով զանոնք Ե.-Ը. դարերու մեր պատմիչ հեղինակներէն:

Կարելի է մարդ առաջին ակնարկով մը լոկ թարգմանութիւններ համարի այս պատկերները կամ մանաւանդ բարոյական նկարագիրներն ու դիմանկարները, սակայն խոհուն ընթերցող մը պիտի տեսնէ թէ՛ ռճրան լուրջ աշխատութիւն և խուզարկու ջանք արժած են հմուտ հեղինակին այս պատկերները: Կը յուսանք որ Հեղինակը այս իւր վարդապետական աւարտաճառը հայերէն թարգմանութեամբ ալ հրատարակէ, օգտակար ծառայութիւն մը մատուցանելով մեր ընթերցասէր հասարակութեան, մանաւանդ բարձրագոյն վարժարանաց ուսանողութեան:

— Համառոտ գիծերու մէջ ամբողջ հայ ժողովրդեան անցեալը, ներկայն և ապագայն կը ներկայացնէ Պ. Արշակ Չօպանեան աշխոյժ ու վառվռուն ճառախօսութեամբ մը Տրեքի Գոշէնի Նախագահութեան ներքև հաւաքուած ակումբի մը մէջ. Le peuple Arménien հեռու է այն ցամաք պատմական քաղաածներու կրկնութիւններէ որոնք յաճախ այսպիսի առիթներու մէջ կ'երևին. հոս ունինք կենդանութիւն, աւիւն, եռանդն բանաստեղծական և նոյն իսկ հայու արեւելեան խոհուն, զգայուն, կայտառն հոգին ու սիրտը:

— Յոբեկեան հանդէսները որ ազգային զգացման ու հոգւոյն նոր զարթնում և եռանդ մը շնչեցին, պատճառ եղան բազմաթիւ հրատարակութեանց, Բազմաթիւ հանդէսներ սարքուցան ամէն կողմ, նոյն իսկ ամենափոքր գիւղերու մէջ անգամ և մինչև իսկ հեռաւոր գաղթականութեանց անձանթ անկիւնները, Ամերիկայէն մինչև Հնդկաստան և ի ճարձն: Գրեթէ ամէն ազգային պարբերական՝ ամաթներթ, շաբաթներթ թէ օրական լրագիր, պարտք մը համարեցաւ իրեն բազմաթիւ յօդուածներով այս կրկնակ յորեւաններու նշանակութիւնը բացատրել հասարակութեան առջև, շատերը բացառաբար որառանձին թիւեր ալ նուիրեցին այս հանդէսներու, որոնք խառնուելով անհատական հեղինակներու հրատարակութեանց՝ արդէն իսկ պատկառելի և պատուաբեր գրականութիւն մը կը կազմեն ի յիշատակ ապագայի: Այսքան հրատարակութեանց մէջ կը ցաւինք որ պիտի չկարենանք ամէնն ալ յիշատակել. արժանաւորագոյն կը ամարինք հետևեալները, որոնց վրայ համառօտիւ կ'ուզենք անդրադառնալ:

Անշուշտ առաջին պատուոյ տեղը արժանաւորապէս կը զբաւէ թէոդիկին Տիպոս տառը: Հրատարակութիւն ըստ ամենայնի խնամեալ, ըստ կարելւոյն մանրացնին և կատարեալ. արտաքին գեղ և ներքին պարունակութիւն ձեռն ի ձեռն կը դիմեն հոս զէպ ի նախանձելի կատարելութիւն: Պ. թէոդիկ կը ներկայանայ ու-

սուլթաններ, բանադատ, զրազէտ, մատենախօս, արուեստագէտ, խուզարկու քանասէր և քաջ հմուտ տպագրութեան արուեստի ամէն հոնգամանաց:

Հոս 192 էջերու մէջ խտացած կը գտնենք ինչ որ կարելի է սպասել տպագրութեան նուիրուած գիրքէ մը, և նաև դեռ շատ բան, որոնց գոյութիւնը ուրախութիւն կը պատճառէ իբր անակնկալ Հայ տպագրութեան առձեռն հանրագիտակն է այս զոր ամենայն ուրախութեամբ կը յանձնարարենք մեր ընթերցողաց, քաջալերելու համար աշխատասէր մը որ իր քրտանց արդիւնքը վայելելու իրաւունքն ստացած է:

— Այս տօնական հրատարակութեանց մէջ յիշենք Աստրախանի Հայ զրական գեղարուեստական ընկերութեան Յոքիթա-նական Ժողովածուն, Եւրոպայի հայ Յ. Դ. Ուսանողական միութեան Ուսանողի Եօթներորդ պրակը նուիրուած Հայկական տպագրութեան ԱՊՕ—ամսակի յիշատակին, Դպրոցասէր Տիկնանց Ռժանդակ Ռիփորզաց Միութեան՝ գողտր և ազնուական մտածութեամբ յօրինած Ուլական գրական ժողովածուն, Գիրի գիտի Մեծ Յոքիթանին ստրիւ, Ամերիկահայ Ուսանողական Միութեան կողմէ հայ տպագր. չորսհարիւրամակին նուիրուած Նախընծայ հատորը, Լուսիկեանի Ս. Մհարոյ և Հայ գիրի Գիշտը, և Եւրոպայի Ս. Մհարոյ քերթուածները, Միլքոն Յովսէփեանի Համագոյային տօնը և Պարտիզակցին թերթիկը, Ամասիոյ « փոքր—Հայաց »ի Դարեմկոյստը, Վահան Զարդարեանի սարքած Հայկական Սիւնեան, Ս. Ուսահայ և Ս. Մերովպայ յիշմիածին և ի Պոլիս փորագրուած մեծագիր պատկերները, և Մխիթար Աբրահոյր դիմանկարը՝ մեծագիր՝ փորագրուած և տպագրուած ի Ս. Ղազար:

— Համազգային յօրելեաններու հետ մասնական յօրելեաններ ալ ունեցանք և անցեալ տարի եղաւ շրջան մը յիշատակներու Րաֆֆի, Փորթուզական, Գուրգէն տարեդարձներ տօնելով ունեցան իրենց կենսագիրներն ալ յանձին Ս. Գարամա-

ճեանի, Ռ. Թորոսեանի, Ա. Մուպահեան-ճեանի և հռչակաւոր հայագէտ, հայասէր, լեզուագէտ, բանաստեղծ Ուս. Իէզա՝ իւր դամբանական բանախօսն ունեցաւ մտերիմ ու սիրելի բարեկամ մը Dr. Carlo Frattini: Սգոյ պսակ մը հիւսուեցաւ ազգային փայլուն գրիչներէ նաև Փիէր Քիյեաոի յիշատակին որուն կեանքը նուիրուեցաւ ի պաշտպանութիւն հալածեալ և հարստահարեալ ժողովրդոց և մեզ հայոցս՝ ի վեր քան զամէն ինչ, որոնց իւր սրտին սէրէն դուրս լայն բացաւ նաև իւր քսակին բերանը: շարժեց իւր գրիչն ու լեզուն Եւրոպայի դիմաց պարզելու համար Հայ յուն:

— Այս հայկական ցաւերու արձագանքներ են Appel aux Grandes Puissances, — Turkish Atrocities, — La Question Arménienne և Յ. Թերզեանի կիլիկիոյ Աղտը հրատարակութիւնները: Կ'ուզէինք որ հոս յիշուէր նաև անուն մը՝ որուն արիասիրտ, մեծախոհ և առատածեռն հայրենանուէր վարմունքը կը ցաւ վերջապէս տառապեալ հայուն ցաւերը հասկցնել խլացած Եւրոպիոյ, շարժեց սալացեալ սրտերը և հաստատուն հիմանց վրայ կանգնեցուց նոր բարենորոգմանց ծրագիր մը, վերջ տալով դարաւոր աղետալի արիւնահեղ հարստահարութեանց: Կ'ուզէինք յիշել, սակայն դեռ առանձին արժանաւոր հատոր մը չհրատարակուեցաւ, և լրագրաց ու պարբերական հանդէսներու առօրեայ յօդուածները կարող չեն արժանապէս փայլեցնել այդ վսեմ անձի վսեմ դէմքն ու տիպարն որ ամէն հայուն սրտին մէջ արդէն ունի իւր վեհ անուան յուշարձան մը, ապագայի կենայ կամ պղնձեայ յուշարձաններու կարապետ:

Պ. Թէոդիկ իր արդիւնաւոր գործունէութիւնը կը շարունակէ նաև Ամենուն Տարեցոյցը կանոնաւորապէս հրատարակելով: Այս հրատարակութեան վրայ խօսելն իսկ աւելորդ է, քանի որ արդէն փայլուն շրջան մը կատարած է և իր ութերորդ տարին թեւակոխած՝ միշտ սի-

բուած ամէնէն ու միշտ փնտռուած իր բազմաթիւսակ և օգտակար պարունակու թիւամբ:

— Այս տարուան Ռադոյցներու կարգին մէջ յիշատակենք Երուսաղեմինը որ կարեւոր յաւելուած մ'ունի ընծայելով Ալեքսի մը Երուսաղեմի Ս. Յակոբեանց տապարանին վրայ:

— Անշուշտ ասոնցմէ շատ աւելի կարեւոր հրատարակութիւններ են Սէս. A. Meilletի Հին-Հայերէնի տարրական քերականութիւնը, իրեն լեզուագիտական ու սուննաարութիւնները Հին հայերէնի յատկերէնէն առած մի քանի փոխառութեանց վրայ և հայերէնի մէջ շարադասութեան վրայ: Այսպէս է նաև K. M. T.ի համառօտ բայց սրատես ակնարկն Կովկասեան եռյապատմական շրջանին վրայ, ուր հայերէն համեմատութիւնը ալ կը ծառայեն լուսարանութեան:

— Տեղույ սղութիւնը կը պարտաւորէ զմեզ ակամայ և ցաւելով առանց յիշատակութեան անցնելու շատ զործեր որոնց ցուցակը յաջորդ էջերու մէջ ամփոփած ենք, և որոնց պարունակութիւնը արժանի է ներկայացուելու դպրոցական ուսուցչաց և աշակերտաց ուշադրութեան: Անշուշտ ոչ ամէնն ալ հաւասարապէս լաւ աշխատասիրուած են, և ոչ ալ նոյն աստիճանի կարևորութիւն մ'ունին. կան որ բոլորովին ալ աննպատակ են թերևս կամ իբրև կրկնութիւն նախորդ հրատարակութեանց և կամ իբրև պակասաւոր զործեր:

— Փերթուածներու և վիպական բաժնին մէջ ալ յիշենք անողակի Աժտէրեանի, Բաշինջաղեանի, Զարդարեանի, Թէրէհեանի, Տիկ. Խսկուհի Մինասեանի, Պարսամեանի, Օհանեանցի, և այլն՝ անուններ, որոնց Հէքերը, Էպիգրեքը, Clarté Nocturne, Հրաշայի Յայտարարները, San-glots, Արիսի տօնը, Armeniens Leid, գրեթէ հաւասարապէս հայկական սրտի ցաւը նուազը կը հնչեցնեն, որոնց հետ ի խառնուին թարգմանածով թարգման Յայտարան Ալեքիսիան գրականութեան (Սահակ-Մեսրոպի), Վեպիկներ Տօլստոյի ևն.:

Հ. Ե. ԱԻԳԵՐ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Հ. ԲԱՐՍԵԼ Վ. ՍԱՐԳԻՍԵԱՆ. — Մայր Գուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Միթիթարեանց ի վենետիկ. Հատոր Առաջին. Վենետիկ Ս. Ղազար 1914. — P. Basile Dr. Sarghissian. Grand Catalogue des Manuscrits Arméniens de la Bibliothèque des P.P. Mékhitaristes de Saint Lazare, à Venise. Vol. I. Manuscrits de l'Antique et du Nouveau Testament. (Eu arménien moderne) p. I-XX 838, in-4°:

P. Garabed Dr. Der-Sahaghian. — Chateaubriand en Orient. Venise St. Lazare 1914. (Գրախօս. յաջորդ թիւով):

Fred. Corn Conybeare & J. Oliver Wardrop. — A Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum... to which is appended A Catalogue of Georgian Manuscripts in the British Museum.. London 1913.

ՍԱՀԱԿ Ծ. Վ. ԱՍՏՈՒԿԱՆՍՈՒԹԵԱՆ. — Պատկերացոյց հաւաքածոյ մասնաւոր հնութեանց Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի և շրջակայից. Պրակ Բ. ի տպ. Սրբոյ Յակոբեանց. Թիւրքուաղէմ 1913:

Մ. ԱՅԵՂԵԱՆ և Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ. — Մովսիսի Խորենացոյ պատմութիւն Հայոց: (Գրախօս. Տեառն Սուրբապայ Արք. Պարզեանց). Պատմագիրը Հայոց, Հատոր Երկրորդ. Գիրք Առաջին. Տփղիս-Արագածի վանքական Մարտիրոսեանց. 1913:

— Ստեփանոս Նազարեանցի երկերը կենսագրական ակնարկով. Հատոր 1. Թիֆլիս տպ. Ն. Աղանեանի 1913:

(Կովկ. Հայ Հրատարակչական. N. 16) K. Kostanevitch. — Vmakan Taregir Թովակ յոլովատոյ արթանագրովեան հայոց. Petropoli. Typis Academiae Caesareae Scientiarum 1913. (Bibliotheca Armeno-Georgica II).